ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության 2014 թվականի 1-ին կիսամայակի կատարված աշխատանքների մասին

2014թ գարնան գյուղատնտեսական աշխատանքները կազմակերպված և ժամանակին սկսելու համար այս տարվա գարնանը շուկայականից ցածր գներով մարզի հողօգտագործողներին հատկացվել է 320 տ ազոտական պարարտանյութ, 124000 լ դիզելային վառելանյութ, 28500 կգ գարնանացան գարու և 468 կգ առվույտի սերմացու, ինչպես նաև ցրտահարությունից տուժած համայնքներին որպես օգնություն հատկացվել է 1 կգ լոլիկի, 40 կգ վարունգի, 24 կգ սեխի և 25 կգ ձմերուկի սերմեր: Արդյունքում կատարվել է 2316 հա գարնանացան, որից 1505 հա հացահատիկային, 436 հա բանջարաբոստանային, 375 հա կերային և տեխնիկական մշակաբույսերի ցանք, նախորդ տարվա համեմատությամբ կատարվել է 113 հա ավել ցանք: Արին և Ազատեկ համայնքներում <<Հայկական միրգ>> կազմակերպությունը հիմնել է 27.4 հա ընկյուզենու և բալենու այգիներ:

Պետական աջակցության ծրագրի շրջանակներում գյուղատնտեսության նախարարություն է ներկայացվել 121 տ ազոտական պարարտանյութի, 113000 լ դիզելային վառելանյութի և 42 տ աշնանացան ցորենի սերմացուի պահանջարկ, որը նույնպես շուկայականից ցածր գներով կհատկացվի մարզի հողօգտագործողներին ընթացիկ տարվա աշնանը:

Հաշվետու ժամանակաշրջանում գյուղատնտեսության փոխօգնության բանկի միջոցով 408 շահառուների տրվել է 354 մլն դրամ գյուղատնտեսական վարկ, որից 169 շահառուի 125 մլն դրամը սուբսիդավորված վարկեր են: